



ՀԵՐԱՏՑԻ ԱՐԶԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ГЕРАЦИ ПРОФЕССИОНАЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ
HERATSI TRADE ORGANIZATION

«ՀԵՐԱՏՑԻ» ԱՐԶԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԿԱ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍԻԻ
ԹԻՎ 1 ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կազմված է 11.05.2020 թվականին, բաղկացած է երեք էջից)

ք. Երևան

11.05.2020թ.

2020 թվականի մայիսի 11-ին ժամը 14:30-ին հրավիրվել է Համաժողովի հեռակա արտահերթ նիստ՝ Ներկայացուցչական մարմնի միջոցով:

Կազմակերպության ներկայացուցչական մարմնի անդամներին ուղարկվել է էլեկտրոնային նամակ՝ հետևյալ օրակարգով և դրանց քվեաթերթիկներով.

Օրակարգ.

1. Կոլեկտիվ պայմանագրի նախագծին հավանության արժանացնելու հարց,
2. Գործադիր կոմիտեի անդամների քանակական կազմի հաստատման, և Գործադիր կոմիտեի նոր անդամ(ներ)ի ընտրության հարց:

Ներկայացուցչական մարմնի հեռակա արտահերթ նիստին մասնակցել ևն 45(քառասունհինգ) ներկայացուցիչներ:

Բացակայում էին 4 (չորս) ներկայացուցիչ:

Քվորումն ապահովված է.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵՑ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Ներկայացուցչական մարմնի անդամներին էլ ուղարկվել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի, ի դեմս ռեկտոր Ա.Մուրադյանի և «Հերացի» արհեստակցական կազմակերպության, ի դեմս նախագահ Մ. Միմոնյանի միջև կնքվելիք «Կոլեկտիվ պայմանագրի» նախագիծը և համապատասխան քվեաթերթիկը.

Քվեարկությանը մասնակցած անդամներից 45ն էլ քվեարկել էին կողմ, հետևաբար Գոլեկտիվ պայմանագրի նախագիծը արժանացավ հավանության:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Ներկայացուցչական մարմնի անդամներին էր ուղարկվել քվեաթերթիկ և քվեարկության դրված հարցի ձևակերպումը, այն է՝ Կազմակերպության գործադիր կոմիտեի անդամ Արթուր Նորիկի Առաքելյանը դուրս է եկել աշխատանքից, հետևաբար դադարել է նաև նրա անդամությունը Կազմակերպությանը:

Քանի որ վերջինս հանդիսանում էր Գործադիր կոմիտեի անդամ, նրա տեղը այժմ թափուր է մնացել, ուստի, ըստ գործող կանոնադրության, անհրաժեշտություն է առաջանում Գործադիր կոմիտեի անդամների քանակական կազմի հաստատման, և(կամ) Գործադիր կոմիտեի նոր անդամ(ներ)ի ընտրության:

Նախորդ Ներկայացուցչական մարմնի նիստում Գործադիր կոմիտեի անդամների թվաքանակը հաստատվել էր 13-ը՝ և քանի որ անդամներից մեկը դուրս էր եկել, ներկայումս Գործադիր կոմիտեն բաղկացած է 12 անդամից: Անհրաժեշտություն է առաջանում կա՛մ ընտրել նոր անդամ՝ պահպանելով 13 անդամյա քանակական կազմը, կա՛մ հաստատել անդամակազմը՝ 12 գործող անդամներով, կա՛մ սահմանել նոր քանակական կազմ և ընտրել նոր անդամ(ներ):

Քվեարկությանը մասնակցած 45 անդամներից «Շնորհել նոր անդամ՝ պահպանելով 13 անդամյա քանակական կազմը» տարբերակին կողմ էին քվեարկել 9 ներկայացուցիչ, «Հաստատել անդամակազմը՝ 12 գործող անդամներով» տարբերակին կողմ էին քվեարկել ներկայացուցիչներից 35-ը, իսկ «Սահմանել նոր քանակական կազմ և ընտրել նոր անդամ(ներ)» տարբերակին՝ 0 ներկայացուցիչ: 1 քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր:

Վերլուծելով քվեարկության արդյունքները արձանագրում ենք, որ Գործադիր կոմիտեի անդամների քանակական կազմը հաստատվեց 12-ը, պահպանելով գործող անդամների հետևյալ կազմը՝

Մարգարյան Խաչատուր Մահակի, Գեովորտեյյան Բևատրիսա Կարպիսի, Թադևոսյան Արտաշես Էդուարդի, Մարդիյան Մարինե Արարատի, Խաչիկյան Տաթևիկ Նրունգևի, Հովհաննիսյան Հովիտանես Արտաշեսի, Վարդանյան Սվետլանա Գևորգի, Կարապյան Նաիրա Յուրիի, Գրիգորյան Արտեմ Մերգելի, Մադաթյան Տիգրան Արմենի, Հովհաննիսյան Ալվարդ Հուսիկի և Սիմոնյան Մարթա Հեկտորի:

Կից

1. Օրակարգի առաջին և երկրորդ հարցերի քվեաթերթիկները.

Նախագահ Քառասուն Մ. Սիմոնյան

Քարտուղար Ս. Բյուրե Մ. Սարգսյան